

արտասահմանյան շուկաների համար, այնպես էլ արտասահմանյան ապրանքները հայրենական շուկայի համար և անկախ այն բանից, թե որքանով են պայմանավորված տնտեսական աճի վրա ազդող բազմաթիվ գործոնների ազդեցությունները, մենք կարող ենք փաստել, որ արտաքին առևտուն նման առաջընթաց տեմպը խթանում է տնտեսական աճը:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է ընդգծել, որ չնայած ՀՀ աշխարհագրական դիրքին և որոշ հարեւան երկրների կողմից առաջացրած խոչընդուներին, մասնավորապես շրջափակումների և տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի ուսումնական գործողությունների ազդեցության վեկտորի ուղղությանը, այն գոտնվում է գլոբալ տնտեսության ինտեգրվելու գործընթացում և, որ ամենակարևորն է, շուկայական սկզբունքներով առևտուր իրականացնող երկիր է:

## ՀՐԱՏԱՎԵԼՈՒՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

### ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից հասարակության արագընթաց փոփոխությունը, գիտատեխնիկական առաջընթացի դերի բարձրացումը, գլոբալացումը, ազգային տնտեսությունների միաձուլումը բերում են սոցիալ-տնտեսական նոր իրողությունների և մարդկային նոր քաղաքակրթության առաջացմանը: Մրա հետ մեկտեղ առաջանում են նոր մարտահրավերներ, վտանգներ, խնդիրներ, որոնց դեպքում անվտանգության հիմնախնդիրները դառնում են առաջնային: Հասարակության և բնության փոխհարաբերությունների ժամանակակից մակարդակը, աշխարհաքաղաքական առնակատումների սրումը, ժողովրդագրական և տնտեսական խնդիրների լարվածության մեծացումն սպառնում են մարդկային գոյությանը: Այս համատեքստում առավել մեծ նշանակություն են ծեռք բերում ազգային անվտանգության, մասնավորապես տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրները: Պետության անվտանգության և պաշտպանվածության ապահովումը մարդկության զարգացման բոլոր ժամանակներում կախված են եղել զարգացած և կայուն տնտեսություն ունենալուց:

Մարդկության գործունեության բոլոր ոլորտներում վտանգների առաջացման հավանականությունը հասարակությանն սովորում է ավելի ակտիվացնել անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները: ՍԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանի կարծիքով այսօր վտանգները դարձել են շատ ավելի սարսափելի: Դրա համար ՍԱԿ-ի կանոնադրությանը 21-րդ դարում ավելացել են և երկու դրույթներ՝

1. անվտանգության ապահովման ավանդական հայեցակարգի լրամշակում,
2. անհրաժեշտ է ոչ միայն կանխարգելել, այլ նաև ակտիվորեն կառավարել ոխակերը և վտանգները<sup>1</sup>:

Ազգային անվտանգության ապահովման՝ առավել ևս տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրներն այսօր շատ կարևոր են բոլոր երկրների համար: Տնտեսական շահերն այսօր դարձել են երկրների արտաքին քաղաքականության որոշիչ կողմը:

Տնտեսական անվտանգություն հասկացությունը, որպես իր կարևորագույն առարկայական և ածանցյալ չափանիշ, ենթադրում է համաշխարհային շուկայում ազգային տնտեսության

<sup>1</sup> К.Аннан, Доклад на саммите тысячелетия в ООН, Международная жизнь N 10, Москва 2000, ст.20.

և դրա ճյուղերի մրցունակությունը, որը համաշխարհային տնտեսության բազմաբնույթ միտումներում և զարգացումներում ապահովում է երկրի ազատ շուկայական տնտեսության կենսունակությունը: Շուկայական մրցակցության պայմաններում գործող, աշխատանքի միջազգային բաժանման մասնակից ազատական տնտեսությունների համար տնտեսական անվտանգությունը փաստացի հանգում է այդ մրցակցության ընթացիկ ռիսկերին և վտանգներին համապատասխանաբար արձագանքելու<sup>1</sup>:

Տնտեսական անվտանգության ապահովման վերաբերյալ տեսակետները Հայաստանի Հանրապետությունում առաջացել են մի շարք գործոնների ազդեցությամբ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները:

- ԽՍՀՄ-ի անկումը,
- Երկրի շրջափակումը,
- դարարադան հակամարտությունը,
- ճգնաժամային իրավիճակները տնտեսության մեջ, որոնք առաջացել են «տնտեսական բարեփոխումների» արդյունքում,
- ստվերային տնտեսության չափերի մեծացումը,
- կոռուպցիայի ավելացումը,
- տեխնածին աղետները,
- համաշխարհային տնտեսության գլոբալացումը:

Երկար ժամանակ անվտանգության ապահովումը հասկացվում էր երկրի պաշտպանությունն արտաքին քննամիներից, երկրի տարածքային ամբողջականության և անկախության անձեռնմխելությունը: Պետության անվտանգության ապահովման ուղղված միջոցառումների շարրում առաջին տեղը հատկացվում էր ռազմական և ուժային մեթոդներին: Սակայն 20-րդ դարի 70-ական թվականներից սկսած՝ աշխարհի շատ երկրներում փոխվել է «ազգային անվտանգություն» հասկացության բովանդակությունը: Այդ երևույթն առաջին հերթին կապված է երկրների տնտեսությունների փոխկապվածության աճի, ապրանքների, ծառայությունների, կապիտալի, տեխնոլոգիաների, աշխատումի տեղաշարժի հետ: Փոխկապվածությունն աստիճանաբար վերածվում է կախվածության, որի արդյունքում փոքր և քույլ երկրներն ընկնում են հզորների գերիշխանության տակ: Մրա հետ մեկտեղ գլոբալացումն իր ազդեցությունն է քողնում ոչ միայն ազգային տնտեսությունների վրա, այլ նաև երկրների քաղաքականությունների վրա: Մարդկության ներկա զարգացումը կապված է վտանգների մեծացման հետ բոլոր ոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, էկոլոգիական: Ներկա իրավիճակն աշխարհում պարունակում է զարգացում՝ ռիսկի մեծ աստիճանով: Գլոբալացման պայմաններում անհրաժեշտ է այդ ռիսկերի դեմ պայքարել համաշխարհային մակարդակով: Այս հանգանաքը հաշվի առնելով՝ տարբեր գիտնականներ եկել են այն եզրահանգման, որ մեր քաղաքակրթությունը «ռիսկերի քաղաքակրթություն է»: Սա նշանակում է, որ պետք է միջոցառումներ ձեռնարկել այդ իրավիճակից դուրս գալու համար:

Անվտանգությունը լայն հասկացություն է, որը ներառում է անհատի և հասարակության անվտանգությունից մինչև պետության անվտանգությունը, տնտեսական և սոցիալական անվտանգությունից մինչև ռազմաքաղաքական և էկոլոգիական անվտանգությունը:

Տնտեսական անվտանգությունը համարվում է յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության անբաժանելի մասը: Այն ներառում է տնտեսական, քաղաքական, իրավական, աշխարհաքաղաքական պայմանների համախմբությունը, որն էլ ապահովում է երկրի՝ կենսական նշանակություն ունեցող շահերի պաշտպանությունը տվյալ երկրի տրամադրության տակ գտնվող ռեսուրսների առկայության դեպքում, ինչպես նաև հնարավորություն է տալիս

<sup>1</sup> Թ. Սահմանադրության, «Իրավունք» օրաբերք, 21/1561/, 21 Մարտ, 2008:

հավասարակշռված և դիմամիկ զարգանալ: Տնտեսական անվտանգությունը որոշիչ դեր է խաղում երկրի ազգային անվտանգության համակարգում, այն մտնում է պետական անվտանգության համակարգի մեջ, և նրա ապահովումը ազգային առաջնահերթություններից, պետության անկախության, հասարակության և անհատի կայուն ու արդյունավետ գործունեության գրավականն է:

Ուստի տնտեսագետ Վ.Սենչազովը տնտեսական անվտանգության էությունը ներկայացնում է որպես տնտեսության և ինստիտուտների այնպիսի վիճակ, որի դեպքում պաշտպանվում են ազգային շահերը և քաղաքականության սոցիալական ուղղվածությունը վտանգների ժամանակ<sup>1</sup>:

Իսկ Ա.Էլարիոնովի կարծիքով տնտեսական անվտանգությունը տնտեսական, քաղաքական և իրավական այնպիսի պայմանների ամբողջություն է, որն ապահովում է տնտեսական ոեսուրսների առավել մատչելի և արդյունավետ օգտագործում երկարաժամկետում<sup>2</sup>: Այս տեսակետից տնտեսական անվտանգությունը բնորոշվում է որպես տնտեսական արդյունավետություն, որտեղ համեմատվում են արտադրության ծախսերն ու արդյունքները:

Վ.Զագաշվիլու կարծիքով «ազգային տնտեսության անվտանգությունն» այնպիսի վիճակ է, որն ապահովում է տնտեսական անկախությունը, տնտեսական հզորության ավելացումը, կյանքի որակի բարձրացումը միջազգային տնտեսական համագործակցության գործընթացներում<sup>3</sup>: Այստեղ շեշտվում է տնտեսական անվտանգության կարևորությունը գլոբալացման պայմաններում:

Լ.Արակինի կարծիքով տնտեսական անվտանգությունն այնպիսի պայմանների և գործուների ամբողջություն է, որոնք ապահովում են ազգային տնտեսության անկախությունը, կայունությունը, դիմացկունությունը և ինքնակատարելագործվելու ունակությունը<sup>4</sup>:

Վ.Տամրովեցի կարծիքով այս կամ այն երկրի տնտեսական անվտանգություն ասելով պետք է հասկանալ նրա արդյունաբերական համակարգի այնպիսի իրավիճակ, որն ապահովում է երկրի նպատակների իրականացումը<sup>5</sup>:

Վ.Սավինի կարծիքով տնտեսական անվտանգությունը երկրի կենսական նշանակություն ունեցող շահերի պաշտպանության համակարգ է<sup>6</sup>:

Տնտեսական անվտանգությունը տնտեսության հնարավորությունն է արդյունավետորեն ապահովել հասարակության պահանջմունքները ազգային և միջազգային մակարդակներով<sup>7</sup>:

Արևմտյան տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական անվտանգության ապահովումը բնորոշվում է որպես մրցունակության հիմնախնդիրների, տնտեսության կայունության պայմանների, անօրինական տնտեսական գործունեության կանխարգելման, պետության՝ միջազգային անվտանգության հիմնախնդիրների լուծման ուղղված միջոցառումների համակարգ:

«Ուղղահայաց կառավարման» տեսության կողմնակիցների կարծիքով տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկվի հիերարխիկ կառուցվածքով՝ միկրո և մակրո օղակների միջև՝ նշելով, որ ազգային տնտեսության անվտանգության մակարդակը որոշվում է ընկերությունների և առանձին տարածաշրջանների տնտեսական անվտանգության մակարդակով<sup>8</sup>:

«Հորիզոնական կառավարման» տեսության կողմնակիցները շեշտը դնում են տնտեսության ֆունկցիոնալ և ոլորտային անվտանգության վրա, որոնցից կարելի է նշել պարենային, աշխա-

<sup>1</sup> В.Сенчагов. Экономическая безопасность, Производство. Финансы. Банки, Москва 1998.

<sup>2</sup> А.Иларionov, Критерии уровня экономической безопасности, Вопросы Экономики N4, Москва 1998.

<sup>3</sup> В.Загашвили, Экономическая безопасность России, Москва 1997.

<sup>4</sup> Л.Абалкин, Экономическая безопасность России, угрозы и их отражение, Вопросы Экономики N12, Москва 1994.

<sup>5</sup> В.Тамбовец, Экономическая безопасность системы: структура, проблемы, Вестник МГУ, Серия 6, "Экономика" N 3, Москва 1995.

<sup>6</sup> В.Савин, Некоторые аспекты экономической безопасности России, Международный бизнес России, N 9, Москва 1995.

<sup>7</sup> Е.Бухвалид, А.Городецкий, Б.Михайлов, Экономическая безопасность, оценки, проблемы, способы обеспечения, Вопросы Экономики N12, Москва 1994.

<sup>8</sup> А.Скопин, Региональная политика и экономическая безопасность России, Вопросы Экономики N1, Москва 1995.

տանքային, տեխնոլոգիական, արդյունաբերական, ֆինանսական անվտանգությունները<sup>1</sup>:

Ազգային անվտանգության ապահովման գործում կարևոր դերակատարում ունեն տնտեսական գործուները: Տնտեսական անվտանգությունը ներկայումս դարձել է ցանկացած հասարակության կենսագործունեության, նրա սոցիալ-քաղաքական և ազգային կայունության հիմք:

Ազգային անվտանգությունը տնտեսական անվտանգության նախապայմանն ու երաշխիքն է, և հակառակը: Այս երկու գործընթացները փոխկապված են, մեկը մյուսով պայմանավորված, այդ իսկ պատճառով պետք է դիտարկվեն ամբողջության մեջ: Նման պարագայում հաղթահարվում է տնտեսության և պետական քաղաքականությունների նկատմամբ մեկուսի մոտեցումը:

Տնտեսական անվտանգության մեկ միասնական սահմանում չկա: Այն բնութագրվում է տարրեր տեսանկյուններից, որոնք են՝

1. որպես բոլոր տնտեսական սուբյեկտների պահանջմունք, որը որոշվում է սոցիալ-տնտեսական մյուս պահանջմունքների բավարարման աստիճանով,
2. որպես տնտեսական համակարգի բնորոշիչ,
3. որպես ազգային տնտեսության իրավիճակ, որը բնութագրվում է արդյունավետությամբ, արդյունատվությամբ, ճկունությամբ, հարմարվողականությամբ,
4. որպես պետության գործառույթ, որն ապահովում է անհրաժեշտ և բավարար մակարդակով անվտանգություն:

Մարդու գործունեությունը ինչ-որ չափով կապված է անորոշության և վտանգի հետ: Անորոշության ավելացումը կարող է մեծ ռիսկ պարունակել: Տնտեսական համակարգում անորոշությունը նշանակում է, որ տնտեսական ագենտները փորձում են իրենց մարսիմալ կերպով ապահովագրել: Քանի որ անորոշությունը և վտանգը տնտեսական համակարգում առաջանում են հանկարծակի, հետևաբար.

1. անվտանգության հիմնախնդիրները համընդիանուր են,
2. բացարձակ անվտանգության հասնելն անհնար է,
3. տնտեսական համակարգը յուրաքանչյուր պահի պարունակում է անվտանգության որոշակի պոտենցիալ, որը բույլ է տալիս նրան պայքարել ներքին և արտաքին սպառնալիքների դեմ,
4. անվտանգությունը տնտեսական համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է,
5. եթե տնտեսական համակարգը չունենար անվտանգության տարրեր, ապա այն կդադարեր գործել: Ապակառուցողական գործընթացներն արտաքին գործուների ազդեցությամբ ներսից կրայքայեն այն:

Տնտեսական անվտանգության սուբյեկտներն են՝ անհատը, սոցիալական խմբերը, կոլեկտիվը, ընկերությունները և պետությունը, իսկ օբյեկտներն են՝ նրանց տնտեսական շահերը:

Անվտանգության ապահովման սկզբունքներն են՝

- օրինականությունը,
- անձի, հասարակության և պետության անվտանգության հաշվեկշռվածության ապահովումը,
- անձի, հասարակության և պետության անվտանգության փոխադարձ պատասխանատվությունը,
- միջազգային անվտանգության համակարգերի հետ համագործակցությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Г.Шмелев, В.Назаренко, Е.Блинова, Продовольственная безопасность России, пути достижения, Проблемы прогнозирования, Москва 1998.

<sup>2</sup> Ա. Արականյան, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մերողաբանություն և արդյունքներ, «Նորավան» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2005, էջ 25:

Տնտեսական անվտանգության հարաբերություններն իրականացվում են.

- միկրոմակարդակում՝ ծեռնարկությունների և տնային տնտեսությունների տնտեսական անվտանգություն,
- մեզոմակարդակում՝ առանձին ոլորտների, տարածաշրջանների տնտեսական անվտանգություն,
- մակրոմակարդակում՝ ազգային տնտեսության անվտանգություն,
- մեզամակարդակում՝ համաշխարհային և գլոբալ տնտեսական անվտանգություն:

Տնտեսական անվտանգության մասին խոսելիս պետք է տարբերել «տնտեսական անվտանգության հայեցակարգ» և «տնտեսական անվտանգության ռազմավարություն» հասկացությունները: Տնտեսական անվտանգության հայեցակարգն ազգային տնտեսության պաշտպանության գիտական, տեսական և փիլիսոփայական պատկերացումներն են, իսկ տնտեսական անվտանգության ռազմավարությունը միջոցառումների համակարգ է, որոնք միտված են տնտեսական անվտանգության հայեցակարգում նշված վտանգների վերացմանը:

Տնտեսության կենսունակությունը և արդյունավետությունը կախված են ներքին և արտաքին միջավայրերի գործուներից: Հետևաբար՝ տնտեսական անվտանգությունն ունի երկու բաղկացուցիչ՝ ներքին և արտաքին, որոնք որոշվում են ներքին և արտաքին միջավայրերից բխող վտանգներով:

Տնտեսական անվտանգության համակարգի գործառույթներն են՝

1. պաշտպանողական,
2. կարգավորող,
3. կանխարգելող
4. նորարարական,
5. սոցիալական:

Ազգային անվտանգության ապահովման գործառույթներն իրենց իրավասությունների սահմաններում իրականացնում են պետական կառավարման համապատասխան մարմինները: Ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու պետության անվտանգությունը: ՀՀ ազգային անվտանգության մարմինների միասնական համակարգը կազմված է ՀՀ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնից, նրան ենթակա մարդարան մարմիններից, սահմանապահ գործերից, ուսումնական կենտրոններից, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներից: Լիազորված մարմնի գործունեության ընդհանուր դեկալարումը իրենց իրավասությունների սահմաններում իրականացնում են Հայաստանի Հանրապետության նախագահը, կառավարությունը և վարչապետը: Լիազորված մարմնը հանրապետական գործադիր մարմին է, որի դեկալարին նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- հետախուզական գործունեություն,
- հակահետախուզական գործունեություն,
- ռազմական հակահետախուզական գործունեություն,
- պետական սահմանի պահպանություն,
- պայքար հանցագործությունների դեմ:

Մինչև վերջին ժամանակներս անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնն զբաղեցնում էր ուժային կառույցների ներկայացուցիչներից մեկը, նաև նավորապես անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը երկար ժամանակ զբաղեցնում էր պաշտպանության նախարարը, որը պայմանավորված է ՀՀ ազգային անվտանգության գերակայությունների հիերարխիայում ուղղական անվտանգության առավել կարևոր նշանակությամբ: Այս ամենը պայմանավորված է դարարադյան հակամարտությամբ և մեր տարածաշրջանում առկա լարված աշխարհաբարձրական իրավիճակով: Սակայն վերջին ժամանակներս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համակարգում ուղղական անվտանգության ապահովման համակարգին: Մրա մասին է վկայում այն փաստը, որ անվտանգության խորհրդում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ. անվտանգության խորհրդի քարտուղար էր նշանակվել Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, ինչը նշանակում է այժմ ազգային անվտանգության ապահովման վեկտորը շրջվել է կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ պայքարի ուղղությամբ, որը տնտեսական անվտանգության գլխավոր սպառնալիքներից մեկն է: Պատահական չէ, որ հարկային և մարսային մարմինների ղեկավար պաշտոններում նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի վերահսկողության և այլ ստորաբաժանումների բարձրաստիճան պաշտոնյաններ, որոնք առավել տեղեկացված են ստվերային տնտեսության շափերի և ոլորտների վերաբերյալ: Սա նշանակում է, որ հանրապետության նախագահը, որը սահմանադրությամբ իրեն վերապահված պարտականություններով հանրապետության ազգային անվտանգության երաշխավորն է, ցանկանում է երկրի ազգային անվտանգության ապահովման գործում շեշտը դնել տնտեսական անվտանգության վրա, որն արդարացիորեն բխում է Հայաստանում, տարածաշրջանում և ընդհանրապես աշխարհում տիրող աշխարհաբարձրական և տնտեսական իրադրություններից:

Տնտեսական անվտանգության ուղղակի կարևոր է հաշվի առնել տնտեսական անվտանգության այնպիսի կազմակերպական մոտեցումներ, ինչպիսիք են՝ տեղային և գլոբալ սկզբունքները: Տեղայնություն սկզբունքը ենթադրում է այնպիսի տնտեսական պայմանների ստեղծում, որոնք կարող են հակագրել ծագող տնտեսական վտանգավոր գործընթացներին և խթանել նրանց զարգացումը, իսկ գլոբալության սկզբունքը գործածվում է լոկալության սկզբունքի խախտման ժամանակ և ենթադրում է հետևանքների դեմ պայքարի լայնածավալ կազմակերպական միջոցառումների ստեղծում և դրանց իրականացում:

Պետության տնտեսական անվտանգության ներկա մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ուսումնասիրել տնտեսական անվտանգության մակարդակը բնութագրող ցուցանիշները: Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական անվտանգության ցուցանիշների առավելագույն սահմանները խմբավորում են ըստ տնտեսության ոլորտների: Առաջին խումբը միավորում է ազգային արտադրության զարգացման մակարդակը, երկրորդ խումբը՝ ֆինանսական և դրամավարկային իրավիճակը բնութագրող ցուցանիշները:

Հարկ է նշել, որ տնտեսական անվտանգության ցուցանիշները և չափանիշները մշտական տրված, անփոփոխ մեծություններ չեն: Դրանք փոխվում են հասարակական, տնտեսական, աշխարհաբարձրական, բնական փոփոխություններին, աշխատանքի միջազգային բաժանմանը, վերազգայնացման և գլոբալացման գործընթացներին, մրցակցության բարձրացմանը համապատասխան: Սակայն մեկ ցուցանիշ անփոփոխ է. դա պետության հնարավորությունն է հակողություն սահմանել ազգային ռեսուրսների նկատմամբ, այնպիսի տնտեսական զարգացման արդյունավետ համակարգի ստեղծումը, որը նրան բույլ կտա համաշխարհային շուկայում պահպանել իր մրցակցային առավելությունները:

Տնտեսական անվտանգության ցուցանիշներն են՝

- ընդհանուր տնտեսական ներուժը բնութագրող ցուցանիշներ,
- պաշտպանունակության տնտեսական ապահովվածությունը բնութագրող ցուցանիշներ,
- տնտեսության ինքնուրույն զարգանալու հնարավորությունները բնութագրող ցուցանիշներ,
- բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներ,
- ֆինանսական համակարգի անվտանգությունը բնութագրող ցուցանիշներ,
- արտաքին տնտեսական անկախությունը բնութագրող ցուցանիշներ,
- տնտեսական անվտանգության կառավարչական դրույթները բնութագրող ցուցանիշներ:

Տնտեսական անվտանգության համար կարևոր նշանակություն ունեն ոչ թե բուն ցուցանիշները, այլ դրանց շեմային մեծությունները: Դրանք այնպիսի մեծություններ են, որոնց չպահպանելու դեպքում խախտվում են տնտեսության վերաբարության տարրերը, առաջանում են բացասական և քայլայող միտումներ: Թույլատրելի շեմային մեծություններին մոտեցումը վկայում է վերահաս վտանգների և հասարակության մեջ սոցիալ-տնտեսական կայունության հնարավոր խախտման մասին, իսկ շեմային մեծությունների գերազանցումը բերում է անկայունության և սոցիալական կոնֆլիկտների:

20-րդ դարի վերջերին համաշխարհային տնտեսությունը թևակոխել է տնտեսական կյանքի միջազգայնացման մի նոր փուլ, որը կոչվում է համաշխարհային տնտեսության գլոբալացում: Գլոբալացումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում է համաշխարհային զարգացումների վրա: Գլոբալացման համար հիմք են հանդիսացել նյութական արտադրության ոլորտներ միջազգայնացումը և աշխատանքի միջազգային բաժանման հետ կապված կապիտալի և աշխատուժի միգրացիան ողջ աշխարհով մեկ: Համաշխարհային տնտեսության գլոբալացման արդյունքում վերջին տասնամյակներում ձևավորվել են զարգացած երկրներ, որոնք իրենց քաց, էսապանսիոնիստական և գիտատեխնիկական առաջընթացի վրա հիմնված տնտեսությունները դարձել են համաշխարհային առաջատարներ: Այդ պետություններն ել հիմնականում որոշում են համաշխարհային տնտեսական և քաղաքական կյանքի հետագա ընթացքը: Զարգացած երկրները թևակոխել են զարգացման մի նոր փուլ, որը կոչվում է սոցիալական զարգացման փուլ, այսինքն՝ զարգացման շեշտը դրվում է բնակչության կենսամակարդակի զարգացման վրա:

Յուրաքանչյուր երկրի համար միջազգային տնտեսական հարաբերություններում առաջնահերթություն է դարձել ազգային տնտեսության զարգացումը, որը գլոբալացման պայմաններում անհնար է առանց երկրի համաշխարհային տնտեսական կապերի լայն ընդգրկման: Այս նպատակին հասնելու համար երկիրը պետք է ունենա մրցունակ և կայուն տնտեսություն, ինչպես նաև նվազագույնի հասցնի գլոբալացումից եկող տնտեսական, քաղաքական, իրավական և բնապահպանական վտանգները:

Գլոբալացման պայմաններում մեծանում է պետության վրա արտաքին ազդեցությունների ծավալը: Պետությունն ինքնանպատակ չպետք է ընդգրկվի ինտեգրացիոն գործընթացներ: Այն պետք է ուղղված լինի ազգային տնտեսության արդյունավետության բարձրացմանը: Այսդեռ խոսքը ոչ միայն արտաքին տնտեսական կապերում պետության կարգավորիչ դերի բարձրացման մասին է, այլ նաև պետության փոխարարերությունների մասին խոշոր, միջին և մանր բիզնեսի հետ: Պետության դերն է այն է, որ նա պետք է խթանի ներքին և արտաքին շուկաներում մրցունակ ապրանքարտադրողներին ուսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով: